

Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 17-ի 2008/61/ԵՀ հրահանգը, որով հաստատվում են այն պայմանները, որոնցով Խորհրդի 2000/29/ԵՀ հրահանգի առաջինից հինգերորդ հավելվածներում թվարկված որոշ վնասակար օրգանիզմներ, բույսեր, բուսական ծագում ունեցող ապրանքներ եւ այլ առարկաներ կարող են ներմուծվել Համայնք կամ դրա որոշ պաշտպանված գոտիներ, կամ տեղաշարժվել Համայնքում կամ դրա որոշ պաշտպանված գոտիներում՝ փորձարկման կամ գիտական, ինչպես նաեւ տարատեսակների ընտրության նպատակներով աշխատանքներ կատարելու համար

(կողիֆիկացված տարբերակ)

Պաշտոնական տեղեկագիր, L 158, 18.06.2008թ., էջ 0041-0055

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի՝ բույսերի կամ բուսական ծագում ունեցող ապրանքների համար վնասակար օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանց տարածման դեմ պաշտպանիչ միջոցների մասին 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը¹ եւ, մասնավորապես, դրա 3(8), 4(5), 5(5) եւ 13 բ (4) հոդվածները.

Քանի որ

1) Հանձնաժողովի 1995 թվականի հուլիսի 26-ի 95/44/ԵՀ հրահանգը, որով հաստատվում են այն պայմանները, որոնցով Խորհրդի 77/93/ԵՏՀ հրահանգի առաջինից հինգերորդ հավելվածներում թվարկված որոշ վնասակար օրգանիզմներ, բույսեր, բուսական ծագում ունեցող ապրանքներ եւ այլ առարկաներ կարող են ներմուծվել Համայնք կամ դրա որոշ պաշտպանված գոտիներ, կամ տեղաշարժվել Համայնքում կամ դրա որոշ պաշտպանված գոտիներում՝ փորձարկման կամ գիտական նպատակներով եւ տարատեսակների

¹ ՊՏ L 169, 10.07.2000թ., էջ 1: Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի 2007/41/ԵՀ հրահանգով (ՊՏ L 169, 29.06.2007թ., էջ 51):

ընտրության վրա աշխատանքների համար², զգալիորեն փոփոխվել է³:
Հստակության եւ նպատակահարմարության նկատառումներից ելնելով՝ նշված
Հրահանգը պետք է կողիֆիկացվի,

2) 2000/29/ԵՀ հրահանգի դրույթների համաձայն՝ առաջինից երկրորդ
հավելվածներում թվարկված, առանձին կամ այդ Հրահանգի II հավելվածում
թվարկված համապատասխան բույսերում կամ բուսական ծագում ունեցող
ապրանքներում ներգրավված վնասակար օրգանիզմները չեն կարող ներմուծվել
Համայնք կամ դրա որոշ պաշտպանված գոտիներ եւ տարածվել համայնքում կամ
դրա որոշ պաշտպանված գոտիներում,

3) 2000/29/ԵՀ հրահանգի համաձայն՝ դրա III հավելվածում թվարկված բույսերը,
բուսական ծագում ունեցող ապրանքները եւ այլ առարկաներ չեն կարող
ներմուծվել Համայնք կամ դրա որոշ պաշտպանված գոտիներ,

4) 2000/29/ԵՀ հրահանգի IV հավելվածում թվարկված բույսերը, բուսական ծագում
ունեցող ապրանքները եւ այլ առարկաներ չեն կարող ներմուծվել Համայնք կամ
դրա որոշ պաշտպանված գոտիներ, կամ տեղաշարժվել Համայնքում կամ դրա
որոշ պաշտպանված գոտիներում, եթե չեն բավարարում այդ հավելվածում նշված
համապատասխան հատուկ պահանջները,

5) երրորդ երկրներից բերվող, 2000/29/ԵՀ հրահանգի V հավելվածի Բ մասում
թվարկված բույսերը, բուսական ծագում ունեցող ապրանքները եւ այլ առարկաներ
չեն կարող ներմուծվել Համայնք, եթե չեն համապատասխանում այդ Հրահանգում
սահմանված չափանիշներին եւ պահանջներին ու դրանց կցված չէ նման
համապատասխանությունն ապահովող պաշտոնական բուսասանիտարական
հավաստագիր եւ, ավելին, պաշտոնապես չեն ստուգվում՝ այս դրույթների հետ
համապատասխանության համար:

6) սակայն, 2000/29/ԵՀ հրահանգի 3(8), 4(5), 5(5) եւ 13բ (4) հոդվածներով
ապահովվում են, որ այդ կանոնները չկիրառվեն փորձարկման կամ գիտական,
ինչպես նաեւ տարատեսակների ընտրության նպատակով վրա աշխատանքներ
կատարելու համար նման վնասակար օրգանիզմների, բույսերի, բուսական ծագում

²ՊՏ L 184, 03.08.1995թ., էջ 34: 97/46/ԵՀ հրահանգով (ՊՏ L 204, 31.07.1997թ., էջ 43) փոփոխված Հրահանգ:

³Տե՛ս Հավելված IV, Մաս Ա:

ունեցող ապրանքների եւ այլ առարկաների ներմուծման ու տեղաշարժման նկատմամբ այն պայմաններում, որոնք որոշվում են Համայնքի մակարդակում,

7) հետեւաբար, անհրաժեշտ է սահմանել այն պայմանները, որոնք պետք է բավարարվեն նման ներմուծումների կամ տեղաշարժերի դեպքում՝ ապահովելու համար, որ վնասակար օրգանիզմների տարածման վտանգը, գոյություն չունի

8) սույն Հրահանգով ազդեցություն չի գործվում Խորհրդի «Վայրի ֆաունայի եւ ֆլորայի տեսակների առետրով՝ դրանց պաշտպանության մասին» 1996 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 338/97 կանոնակարգի (ԵՀ), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմները միջավայր միտումնավոր բաց թողնելու մասին» 2001 թվականի մարտի 12-ի 2001/18/ԵՀ հրահանգի եւ Խորհրդի՝ ուժը կորցնող 90/220/ԵՏՀ⁴ հրահանգի, ինչպես նաեւ Համայնքի՝ վայրի ֆաունայի եւ ֆլորայի վտանգված տեսակների ու գենետիկորեն փոփոխված օրգանիզմների վերաբերյալ դրույթների համաձայն՝ նյութի համար սահմանված պայմանների վրա,

9) սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Մոլորակի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

10) սույն Հրահանգը չպետք է հակասի IV հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ փորձարկման կամ գիտական նպատակներով եւ տարատեսակների ընտրության աշխատանքների որեւէ գործողության համար, այսուհետ՝ «գործողություններ», որը կներառի թիվ 2000/29/ԵՀ հրահանգի 3(8), 4(5), 5(5) կամ 13բ (4) հոդվածների համաձայն վնասակար օրգանիզմների, բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ

⁴ՊՏ L 106, 17.04.2001թ., էջ 1: 2008/27/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 81, 20.03.2008թ., էջ 45):

այլ առարկաների օգտագործումը, այսուհետ՝ «նյութը», համապատասխան պաշտոնական մարմիններին ներկայացվի հայտ՝ նախքան այդպիսի նյութի՝ որեւէ անդամ պետություն կամ դրա համապատասխան պաշտպանված գոտիներ ներմուծումը կամ դրանց մեջ տեղաշարժը:

2. 2. 1-ին պարբերությամբ նշված հայտում նշվում է առնվազն՝

ա) գործողությունների համար պատասխանատու անձի անունն ու հասցեն.

բ) նյութի՝ ներառյալ տվյալ վնասակար օրգանիզմի գիտական անունը(անունները), անհրաժեշտության դեպքում.

գ) նյութի տեսակը.

դ) նյութի քանակը.

ե) նյութի ծագման վայրը՝ երրորդ երկրից ներմուծվելու համար անհրաժեշտ փաստաթղթային ապացույցներով.

զ) նախատեսված գործողությունների տեսողությունը, բնույթը եւ նպատակները՝ այդ թվում՝ առնվազն, աշխատանքների ամփոփագիր, ինչպես նաեւ փորձարկման կամ գիտական նպատակներով, կամ տարատեսակների ընտրության համար աշխատանքների հստակեցում.

է) կարանտինի տեղափակման եւ, անհրաժեշտության դեպքում, փորձաստուգման համար հատուկ վայրի (վայրերի) հասցեն ու նկարագրությունը.

ը) նյութի պաշտոնական բացթողումից հետո, անհրաժեշտության դեպքում, առաջին պահեստավորման կամ առաջին տնկման վայրը, եթե անհրաժեշտ է.

թ) հաստատված գործողությունների կատարումից հետո նյութի ոչնչացման կամ կիրառման համար առաջարկված մեթոդը, եթե անհրաժեշտ է.

ժ) երրորդ երկրից ներմուծվող նյութը Համայնք մուտք գործելու առաջարկված կետը:

Հոդված 2

1. Առաջին հոդվածում նշված հայտն ստանալուց հետո անդամ պետությունները հաստատում են տվյալ գործողությունները, եթե հաստատվում է, որ բավարարվում են I հավելվածում սահմանված ընդհանուր պայմանները:

Անդամ պետությունները որեւէ պահի չեղյալ են համարում հաստատումը, եթե հաստատվում է, որ այլեւս չեն բավարարվում I հավելվածում սահմանված պայմանները:

2. Առաջին պարբերությունում նշված գործողությունների հաստատումից հետո անդամ պետությունները հաստատում են հայտում նշված նյութի՝ անդամ պետություն կամ անդամ պետությունում, կամ համապատասխան պաշտպանված գոտիներ կամ գոտիներում ներմուծումը կամ տեղաշարժը, այնպես որ, ամեն դեպքում, այդ նյութի հետ կցվի փորձարկման կամ գիտական նպատակներով եւ տարատեսակների ընտրության համար վնասակար օրգանիզմների, բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների կամ այլ առարկաների ներմուծման կամ տեղաշարժման համար համապատասխան մարմնի նամակը, այսուհետ՝ « մարմնի նամակ», որը համապատասխանում է II հավելվածում սահմանված մոդելին եւ տրված է անդամ պետության պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից, որում ձեռնարկվում են գործողությունները, եւ

ա) Համայնքում ծագող նյութի դեպքում՝

i) եթե ծագման վայրն այլ անդամ պետությունում է, ապա մարմնի կողմից ներկայացված նամակը պաշտոնապես ընդունվում է ծագման անդամ պետության կողմից՝ կարանտինի տեղափակման պայմաններում նյութի տեղաշարժման համար, եւ

ii) այն բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների, որոնք թվարկված են 2000/29/ԵՀ հրահանգի V հավելվածի Ա մասում, նյութը նույնպես կցվում է 2000/29/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն տրված բուսասանիտարական անձնագրով, այդ Հրահանգում սահմանված դրույթներին համապատասխանության համար 6-րդ հոդվածի համաձայն կատարված զննման հիման վրա, բացի այն դրույթներից, որոնք վերաբերում են որեւէ վնասակար օրգանիզմի, որի համար գործողությունները հաստատվել են սույն Հոդվածի առաջին պարբերության առաջին ենթապարբերությամբ: Բուսասանիտարական

անձնագիրը պարունակում է հետեյալ հայտարարությունը. «Սույն նյութի տեղաշարժը կատարվում է 2008/61/ԵՀ հրահանգի համաձայն»:

Այն դեպքերում, երբ կարանտինի տեղափակման համար հատուկ վայրը (վայրերը) այլ անդամ պետությունում է (են), բուսասանիտարական անձնագրի տրամադրման համար պատասխանատու անդամ պետությունը բուսասանիտարական անձնագիրը տրամադրում է միայն գործողությունների հաստատման համար պատասխանատու անդամ պետությունից պաշտոնապես ստացված եւ սույն Հոդվածի առաջին պարբերության առաջին ենթապարբերությունում նշված հաստատման վերաբերյալ տեղեկատվության հավաստմամբ, ինչպես նաեւ այն հավաստմամբ, որ կարանտինի տեղափակման պայմանները կիրառվում են նյութի տեղաշարժման ընթացքում, եւ

բ) երրորդ երկրից ներմուծված նյութի դեպքում՝

(i) անդամ պետություններն ապահովում են, որ մարմնի նամակը տրամադրվի նյութի ծագման վայրի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթային ապացույցների հիման վրա, եւ

(ii) 2000/29/ԵՀ հրահանգի V հավելվածի Բ մասում թվարկված բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների մասով, նյութին նաեւ կցվում է, եթե հնարավոր է, թիվ 2000/29/ԵՀ հրահանգի 13(1) հոդվածի համաձայն, ծագման երկրում տրամադրված բուսասանիտարական հավաստագիրը, այդ Հրահանգում սահմանված դրույթների համապատասխանության համար հրահանգի 6-րդ հոդվածի համաձայն կատարված զննման հիման վրա, բացի այն դրույթներից, որոնք վերաբերում են որեւէ վնասակար օրգանիզմին, որի համար գործողությունները հաստատվել են սույն Հոդվածի առաջին պարբերության առաջին ենթապարբերության համաձայն:

Հավաստագիրը, «Հավելյալ հայտարարություն» վերնագրով պարունակում է հետեյալ նշումը. «Սույն նյութը ներմուծվել է թիվ 2008/61/ԵՀ հրահանգի համաձայն»: Նշվում է (են) նաեւ համապատասխան վնասակար օրգանիզմը (օրգանիզմները), անհրաժեշտության դեպքում:

Բոլոր դեպքերում անդամ պետություններն ապահովում են, որ տվյալ ներմուծման կամ տեղաշարժման ժամանակ նյութը պահպանվի կարանտինի տեղափակման

պայմաններում եւ ուղղակի ու անմիջապէս տեղափոխվի հայտում նշված վայրը (վայրերը):

3. Պատասխանատու պաշտոնական մարմինը դիտարկում է հաստատված գործողությունները եւ ապահովում է, որ՝

ա) կարանտինի տեղափակման պայմանները եւ այլ՝ I հավելվածի համաձայն նշված ընդհանուր պայմանները, համապատասխանեցվեն գործողությունների ամբողջ ընթացքում՝ նպատակահարմար ժամանակահատվածներում վայրերի եւ գործողությունների զննմամբ.

բ) հետեւյալ ընթացակարգերը կիրառվում են, հաստատված գործողությունների տեսակի համաձայն.

ի) կարանտինից բացթողման համար բոյսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների կամ այլ առարկաների համար՝

-բոյսեր, բուսական ծագում ունեցող ապրանքներ կամ այլ առարկաներ չեն բաց թողնվում առանց պատասխանատու պաշտոնական մարմնի, այսուհետ՝ «պաշտոնական բացթողում», հաստատման: Նախքան պաշտոնական բացթողումը՝ բոյսերը, բուսական ծագում ունեցող ապրանքները կամ այլ առարկաներ պետք է ենթարկված լինեն կարանտինի միջոցառումների, այդ թվում՝ փորձաստուգման, եւ պետք է հայտնաբերվի, որ դրանք զերծ են որեւէ վնասակար օրգանիզմի նման միջոցներից, եթե այդ վնասակար օրգանիզմը չի հայտնաբերվել որպէս Համայնքում հայտնի օրգանիզմ եւ թվարկված չէ 2000/29/ԵՀ հրահանգում:

-կարանտին միջոցառումները՝ ներառյալ ստուգումը, իրականացվում են այդ մարմնի կամ պաշտոնապէս ընդունված մարմնի գիտականորեն վարժեցված անձնակազմի կողմից, նշված բոյսերի, բուսական արտադրանքի եւ այլ առարկաների համար սույն Հրահանգի III հավելվածում սահմանված դրոյթների համաձայն:

-որեւէ բոյս, բուսական ծագում ունեցող ապրանք կամ այլ առարկաներ, որոնք նման միջոցառումներով զերծ չեն առաջին նախադասությունում նշված վնասակար օրգանիզմներից, եւ որեւէ այլ բոյս, բուսական ծագում ունեցող ապրանք կամ այլ առարկաներ, որոնց հետ շփման մեջ են եղել կամ աղտոտվել են, ոչնչանում կամ ենթարկվում են համապատասխան վնասակար օրգանիզմների վերացմանն

ուղղված անհրաժեշտ բուժման կամ կարանտին միջոցառման. համապատասխանաբար կիրառվում են (ii)-ի դրույթները եւ երկրորդ նախադասությունը.

ii) այլ նյութերի համար (ներառյալ վնասակար օրգանիզմները), հաստատված գործողությունների ավարտին, եւ գործողությունների ընթացքում աղտոտված բոլոր նյութերի համար՝

-այն նյութը (ներառյալ վնասակար օրգանիզմները եւ որեւէ աղտոտված նյութ) եւ որեւէ այլ բույս, բուսական ծագում ունեցող ապրանք կամ այլ առարկաներ, որոնց հետ ունեցել է շփում կամ որը կարող է աղտոտվի, ոչնչացվում է, մանրէազերծվում կամ դիտարկվում է այնպես, ինչպես նշվում է պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից, եւ

-ձեռնարկված գործողությունների վայրերը եւ տարածքները մանրէազերծվում կամ մաքրվում են, ինչպես հարկն է, պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից նշված կարգով.

գ) գործողությունների համար պատասխանատու անձը պատասխանատու պաշտոնական մարմնին անմիջապես տեղեկացնում է 2000/29/ԵՀ հրահանգում թվարկված, ինչպես նաեւ պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից Համայնքի համար վտանգավոր համարված եւ գործողության ընթացքում նկատված վնասակար օրգանիզմների կողմից նյութի որեւէ աղտոտման եւ նման օրգանիզմների՝ միջավայր դուրս գալու որեւէ դեպքի մասին:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ իրականացվեն 2000/29/ԵՀ հրահանգի III հավելվածում թվարկված, ինչպես նաեւ սույն Հրահանգի Ա մասի I, II եւ III բաժիններով չկարգավորվող բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների օգտագործման համար իրականացվեն անհրաժեշտ կարանտին միջոցառումները՝ ներառյալ փորձաստուգումը: Նշված միջոցառումների մասին պետք է ծանուցվի Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին: Նման կարանտին միջոցառումների մանրամասները լրացվում եւ ներդրվում են սույն Հրահանգի III հավելվածում, երբ տրամադրվում են անհրաժեշտ տեխնիկական տեղեկությունները:

Հոդված 3

1. Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից առաջ անդամ պետությունները Հանձնաժողով էլ այլ անդամ պետություններ են ուղարկում հունիսի 30-ին ավարտվող մեկ տարվա ժամկետի ընթացքում սույն Հրահանգով հաստատված նյութի ներմուծումների, տեղաշարժերի էլ դրանց քանակության, ինչպես նաև նույն ժամանակահատվածում III հավելվածով իրականացված կարանտին միջոցառումներով, այդ թվում՝ փորձաստուգմամբ հաստատված այդ նյութի՝ վնասակար օրգանիզմների կողմից որեւէ աղտոտման վերաբերյալ ցանկ:

2. Անդամ պետությունները սույն Հրահանգով հաստատված գործողությունների համար պարտադիր կարանտինի տեղափակման պայմանների էլ միջոցառումների մանրամասների ապահովման առումով համագործակցում են 2000/29/ԵՀ հրահանգի 1-ին հոդվածի չորրորդ մասի համաձայն հաստատված կամ նշանակված իշխանությունների հետ:

Հոդված 4

Անդամ պետություններն անմիջապես Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի բոլոր այն դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 5

IV հավելվածի Ա մասում նշված հրահանգով փոփոխված 95/44/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով IV հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ էլ ընթերցվում V հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 6

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում հրապարակման օրվան հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 7

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2008 թվականի հունիսի 17-ին:

Հանձնաժողովի կողմից

Նախագահ՝

Խոսե Մանուել Բարոզո

ՀԱՎԵԼՎԱԾ I

1. Սույն Հրահանգի 2(1) հոդվածի նպատակներով կիրառվում են հետևյալ ընդհանուր կանոնները.

-նյութի ներմուծման կամ տեղափոխման համար գործողությունների բնույթը եւ նպատակները պետք է ուսումնասիրվեն պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից եւ պետք է հայտնաբերվի, որ այդ գործողությունները համապատասխանում են 2000/29/ԵՀ հրահանգով նախատեսված փորձարկման կամ գիտական նպատակների հասկացությանը, ինչպես նաեւ տարատեսակների ընտրության համար աշխատանքների,

-ձեռնարկվելիք գործողությունների վայրում կամ վայրերում տարածքների եւ միջոցների կարանտինի տեղափակման պայմանները պետք է ստուգված լինեն՝ երկրորդ կետում սահմանված եւ պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից հաստատված դրոյթների հետ համապատասխանության համար,

-պատասխանատու պաշտոնական մարմինը նյութի քանակությունը սահմանափակում է մի չափի, որը համապատասխանում է հաստատված գործողություններին, եւ որեւէ դեպքում այդ չափը չի գերազանցում այն քանակությանը, որը սահմանվել է՝ հաշվի առնելով մատչելի կարանտինի տեղափակման միջոցները,

-գործողությունները նախաձեռնող անձնակազմի գիտական եւ տեխնիկական որակավորումները պետք է զննված եւ հաստատված լինեն պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից:

2. Առաջին մասի նպատակներով ձեռնարկվելիք գործողությունների վայրում կամ վայրերում տարածքների եւ միջոցների կարանտինի տեղափակման պայմանները պետք է բավարար լինեն՝ ապահովելու նյութի ապահով հանձնումն այնպես, որ տեղափակվի որեւէ վնասակար օրգանիզմ եւ վերանա նման վնասակար օրգանիզմների տարածման վտանգը: Հայտում նշված յուրաքանչյուր գործողության համար կարանտինի տեղափակման պայմաններում պահվող վնասակար օրգանիզմների տարածման վտանգը սահմանվում է պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից, հաշվի առնելով նյութի տեսակը եւ նախատեսվող գործողությունը, ինչպես նաեւ վնասակար օրգանիզմների կենսաբանությունը, դրանց տարածման միջոցները, միջավայրի

վրա ազդեցությունը եւ այլ՝ տվյալ նյութի վտանգին վերաբերող համապատասխան գործոնները: Վտանգի գնահատման արդյունքում, պատասխանատու պաշտոնական մարմինը քննարկում եւ սահմանում է, անհրաժեշտության դեպքում՝

ա) տարածքների, միջոցների եւ աշխատելու ընթացակարգերի վերաբերյալ կարանտինի հետեւյալ միջոցները.

-բոլոր այլ բուսական/վնասակար օրգանիզմ նյութերից ֆիզիկական մեկուսացում՝ ներառյալ շրջակա միջավայրում բուսականության վերահսկման քննարկումը.

-գործողությունների համար պատասխանատու կոնտակտային անձի նշանակումը.

-նշանակված անձանց տարածքներին եւ միջոցներին, ինչպես նաեւ շրջապատող տարածքին սահմանափակ հասանելիություն՝ անհրաժեշտության դեպքում.

- այն տարածքների եւ միջոցների անհրաժեշտ նույնականացումը, որոնցով ցույց է տրվում, թե ինչպիսի գործողություններ պետք է իրականացվեն եւ որն է պատասխանատու անձնակազմը

-կատարված գործողությունների ռեգիստրի եւ գործառական ընթացակարգերի տեղեկագրքի պահպանումը, այդ թվում՝ տեղափակման դեպքում վնասակար օրգանիզմներից ազատվելու ընթացակարգերը.

-անհրաժեշտ անվտանգության եւ ազդանշանային համակարգեր.

-վնասակար օրգանիզմների՝ տարածքներ ներմուծման եւ տարածքներում տարածման կանխարգելմանն անհրաժեշտ վերահսկման միջոցները.

-նյութի ընտրանքի, ինչպես նաեւ տարածքների եւ միջոցների միջեւ փոխանցման համար վերահսկվող ընթացակարգերը.

-թափոնների, հողի եւ ջրի վերահսկվող հեռացում՝ անհրաժեշտության դեպքում.

-անձնակազմի, կառույցների եւ սարքավորումների համար անհրաժեշտ հիգիենիկ ու ախտահանող ընթացակարգեր եւ միջոցներ.

-փորձարարական նյութի հեռացման համար անհրաժեշտ միջոցառումները եւ միջոցները.

-միջոցների եւ ընթացակարգերի անհրաժեշտ ցանկավորումը (ներառյալ փորձաստուգումը) եւ

բ) ընդգրկված նյութի տեսակի հատուկ կենսաբանության եւ համաճարակաբանության համաձայն հավելյալ կարանտին միջոցառումներն ու հաստատված գործողությունները.

-տարածքներում՝ անձնակազմի համար հասանելի «երկու դռանի» առանձին պալատով պահպանումը.

-օդի բացասական ճնշման պայմաններում պահպանումը.

-ցանցի անհրաժեշտ չափի բացվածքներով եւ այլ մեկուսացնող շերտերով, օրինակ՝ տզերի համար ջրային արգելապատնեշով, նեմատոդների համար հողային փակ տարաներով եւ միջատների համար էլեկտրոնային ծուղակներով փախուստը կանխարգելող տարաներում պահպանումը.

-այլ վնասակար օրգանիզմներից եւ նյութից, օրինակ՝ բուսական վիրուսային սննդից, ընդունող նյութից մեկուսացման մեջ պահպանումը. (host material- ընդունող նյութ)

-վերահսկող սարքերով բուժման վանդակներում բուժման համար նյութի պահպանումը.

-ոչ մի բուժում վնասակար օրգանիզմների եւ բնիկ շտամների կամ տեսակների միջեւ.

-վնասակար օրգանիզմների մոնոկուլտուրայից խուսափումը.

-վնասակար օրգանիզմի բազմացումը խստորեն վերահսկող պայմաններում պահպանումը, օրինակ՝ բնապահպանական այնպիսի ռեժիմ, որում դիապաուզա տեղի չի ունենում.

-այնպիսի պահպանում, որ չլինի պրոպագուլների տարածում, օրինակ՝ պետք է խուսափել օդի հոսքերից. (propagules-պրոպագուլներ)

-վնասակար օրգանիզմների մշակույթների մաքրությունը ստուգելու ընթացակարգեր՝ մակաբույծներից եւ այլ վնասակար օրգանիզմներից ազատվելու համար.

-հնարավոր վեկտորները ոչնչացնելու նպատակով նյութի համար անհրաժեշտ վերահսկման ծրագրեր.

-լաբորատոր գործողությունների համար ստերիլ վիճակում նյութի մշակումը՝
լաբորատորիայում ասեպտիկ ընթացակարգերի կատարման համար
սարքավորումների ապահովմամբ.

-վեկտորներով տարածված վնասակար օրգանիզմների պահպանումն այնպիսի
պայմաններում, որ չլինի վեկտորի միջոցով տարածումը, օրինակ՝ ցանցի
բացվածքների վերահսկված չափը, հողի տեղափակումը.

-սեզոնային մեկուսացում՝ ապահովելու համար, որ գործողությունները կատարվեն
բույսերի առողջությանը քիչ վտանգ սպառնացող ժամանակահատվածներում:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Փորձարկման կամ գիտական նպատակներով եւ տարատեսակների ընտրության համար վնասակար օրգանիզմների, բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների ներմուծման եւ (կամ) տեղաշարժի համար Մարմնի նամակի նմուշային ձեւը

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ

1. Ծագման երկրի բեռնառաքողի/բույսերի պաշտպանության կազմակերպության անունն ու հասցեն

Փորձարկման կամ գիտական նպատակներով եւ տարատեսակների ընտրության համար վնասակար օրգանիզմների, բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների ներմուծման եւ (կամ) տեղաշարժման համար Մարմնի նամակը

(Տրամադրվել է 2008/61/ԵՀ հրահանգի համաձայն)

2. (ա) հաստատված գործողությունների համար պատասխանատու անձի անունն ու հասցեն

3. Տրամադրման անդամ պետության պատասխանատու պաշտոնական մարմնի անունը

4. Կարանտինի տեղափակման համար հատուկ վայրի (վայրերի) հասցեն (հասցեները) եւ նկարագրությունը (նկարագրությունները)

5. Ծագման վայրը (երրորդ երկրում ծագող նյութի համար կից փաստաթղթերով ապացույցներ)

6. Բույսի անձնագրի համարը

կամ Բուսասանիտարական վկայագրի համարը

7. Երրորդ երկրից ներմուծվող նյութի համար սահմանված մուտքի կետը

8. Նյութի գիտական անունը (անունները)՝ ներառյալ տվյալ վնասակար օրգանիզմների անունը (անունները)

9. Նյութի քանակը

10. Նյութի տեսակը

11. Հավելյալ հաստատագիր

Սույն նյութը [ներմուծվում է Համայնք]/[տեղաշարժվում է Համայնքում] (1) թիվ
2008/61/ԵՀ հրահանգով

1) Հանել, եթե կիրառելի չէ:

12. Լրացուցիչ տեղեկատվություն

13. Նյութի ծագման անդամ պետության պատասխանատու պաշտոնական մարմնի
կողմից հաստատումը

Հաստատման վայրը՝

Ամսաթիվը՝

Լիազորված պաշտոնատար անձի անունը եւ ստորագրությունը՝

14. Տրամադրող պատասխանատու պաշտոնական մարմնի կնիքը

Տրամադրման վայրը՝

Ամսաթիվը՝

Լիազորված պաշտոնատար անձի անունը եւ ստորագրությունը՝

Բնական չափերը կրճատվել են 10%-ով:

+++++ TIFF +++++

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԿԱՐԱՆՏԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՐԱՆՏԻՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄԸ

ՄԱՍ Ա

2000/29/ԵՀ հրահանգի III հավելվածում թվարկված բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների համար

Բաժին I Ցիտրուս Լ-ի (Citrus L.), Ֆորտունելլա Սվինգլի (Fortunella Swingle), Պոնցիրուս Ռաֆ.-ի (Poncirus Raf.) եւ իրենց հիբրիդները՝ բացառությամբ մրգերի եւ սերմերի

1. Բուսանյութը, անհրաժեշտության դեպքում, ենթարկվում է ՊԳԿ/ԲԳՈՄԻ-ի (FAO/IPGRI) Տեխնիկական ուղեցույցներում սահմանված համապատասխան թերապիայի ընթացակարգերի:

2. Առաջին կետի համաձայն կատարված թերապիայի ընթացակարգերից հետո բուսանյութը ենթարկվում է ցանկավորման ընթացակարգերի՝ ամբողջությամբ: Բոլոր բուսանյութերը՝ ներառյալ ցանկավորվող բույսերը, պահվում են I հավելվածում սահմանված կարանտինի տեղափակման պայմաններով հաստատված տարածքներում: Պաշտոնական բացթողումը հաստատելու համար նախատեսված բուսանյութը պահվում է բուսականության աճի նորմալ ցիկլի պայմաններում եւ ենթարկվում վնասակար օրգանիզմների, այդ թվում՝ 2000/29/ԵՀ հրահանգում թվարկված բոլոր համապատասխան վնասակար օրգանիզմների նշանների եւ նախանշանների տեսողական ստուգման, բերման պահին եւ հետեւաբար, երբ անհրաժեշտ է, ցանկավորման ընթացակարգերի ժամանակահատվածում:

3. Երկրորդ կետի նպատակներով բուսանյութը ցանկավորվում է վնասակար օրգանիզմների համար (փորձաստուգված եւ նույնականացված), ըստ հետեւյալ ընթացակարգերի.

3.1. Փորձաստուգման համար օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդները եւ, անհրաժեշտության դեպքում, ցուցանիշային բույսեր, այդ թվում՝ Ցիտրուս սինենսիս (L.) (Citrus sinensis (L.)), Օսբեկ C. աուրանտիիֆոլիա Քրիստմ

(Osbeck, *C. aurantiifolia* Christm) Սվինգ *C. մեդիկա* L., *C. ռետիկուլատա* Բլանկո եւ Սեսամում L. (Swing, *C. medica* L., *C. reticulata* Blanco and *Sesamum* L)՝ առնվազն հետեւյալ վնասակար օրգանիզմները հայտնաբերելու համար.

ա)Բակտերիան կանաչեցնող ցիտրուս (Citrus greening bacterium)

բ) Ցիտրուսային խայտաբղետ քլորոզ (Citrus variegated chlorosis)

գ) Ցիտրուսային մոզաիկ վիրուս (Citrus mosaic virus)

դ) Ցիտրուսային տրիստեցա վիրուս (բոլոր իզոլատներ) (Citrus tristeza virus)

ե) Փայտային մաղձի ցիտրուսային տերեւիկներ (Citrus vein enation woody gall)

զ) Լեպրա (Բոր)-Leprosis

է) Բնականում տարածվող պտրոսիս-Naturally spreading psorosis

ը) Ֆոմա տրակեիֆիլա (Պետրի) Կանչավելի եւ Գիկաշվիլի-Phoma tracheiphila (Petri) Kanchaveli & Gikashvili

Սածումա տեսակի մանդարինի թզուկային վիրուս-Satsuma dwarf virus

Սպիրոպլազմա ցիտրուսային Սալիո էտ ալ.-Spiroplasma citri Saglio et al.

Տերեւի ցիտրուսային վիրուս-Tatter leaf virus

«Կախարդական ցախավել».Witches' broom (MLO)

Քսանտոմոնաս կամպեստրիս-Xanthomonas campestris (all strains pathogenic to Citrus).

3.2. Բույսերի վրա ազդող հատուկ ախտանիշի (Blight) եւ դրա նմանի (Blight-like) դեպքում, որոնց համար չկան բուսանյութի կարճաժամկետ ցանկավորման ընթացակարգեր, բուսանյութը, հասնելուն պես, պետք է ենթարկվի ՊԳԿ/ԲԳՌՄԻ-ի Տեխնիկական ուղեցույցներում սահմանված՝ ստերիլ կուլտուրաներում աճեցված սերմերում ծայրի մասում պատվաստման, իսկ դրանից առաջացող բույսերը պետք է ենթարկվեն առաջին կետի համաձայն թերապիայի ընթացակարգերին:

4. Երկրորդ կետում նշված արտաքին զննման ենթարկված բուսանյութը, եւ որի վրա դիտարկվել են վնասակար օրգանիզմների նշաններ եւ նախանշաններ, ենթարկվում է հետազոտության, այդ թվում՝ փորձաստուգման, եթե անհրաժեշտ է՝

որոշելու, որքան հնարավոր է, նշաններ եւ նախանշաններ առաջացնող վնասակար օրգանիզմների ինքնությունը:

ԲԱԺԻՆ II. Տնկելու համար Յիդոնիա Միլ., Մալուս Միլ., Պրունուս Լ. եւ Պիրուս Լ. (Cydonia Mill., Malus Mill., Prunus L. and Pyrus L.) բույսերը, ինչպես նաեւ դրանց հիբրիդները եւ Ֆրագարիա Լ.-ը (Fragaria L.)՝ բացառությամբ սերմերի

1. Բուսանյութը, անհրաժեշտության դեպքում, ենթարկվում է ՊԳԿ/ԲԳՌՄԻ-ի (FAO/IPGRI) Տեխնիկական ուղեցույցներում սահմանված համապատասխան թերապիայի ընթացակարգերի:

2. Առաջին կետի համաձայն կատարված թերապիայի ընթացակարգերից հետո բուսանյութը ենթարկվում է ինդեքսավորման ընթացակարգերի՝ ամբողջությամբ: Բոլոր բուսանյութերը՝ ներառյալ ինդեքսավորվող բույսերը, պահվում են 1 հավելվածում սահմանված կարանտինի տեղափակման պայմաններով հաստատված տարածքներում: Պաշտոնական բացթողման հաստատման համար նախատեսված բուսանյութը պահվում է բուսականության աճի նորմալ ցիկլի պայմաններում եւ ենթարկվում վնասակար օրգանիզմների, այդ թվում՝ 2000/29/ԵՀ հրահանգում թվարկված բոլոր համապատասխան վնասակար օրգանիզմների նշանների եւ նախանշանների տեսողական ստուգման, բերման պահին եւ, հետեւաբար, երբ անհրաժեշտ է, ինդեքսավորման ընթացակարգերի ժամանակահատվածում:

3. Երկրորդ կետի նպատակներով՝ բուսանյութը ինդեքսավորվում է (փորձաստուգվում եւ բացահայտվում) վնասակար օրգանիզմների համար՝ համաձայն հետեւյալ ընթացակարգերի.

3.1. Ֆրագարիա Լ.-ի դեպքում, անկախ բուսանյութի երկրի ծագումից, փորձաստուգումն իրականացվում է համապատասխան լաբորատոր մեթոդներով եւ, ըստ անհրաժեշտության, ցուցանիշային բույսերով՝ ներառյալ Ֆրագարիա վեսկա, Ֆ. վիրջինիանա եւ Կենոպոդիում սպպ. (Fragaria vesca, F. virginiana and Chenopodium spp.)՝ առնվազն հետեւյալ վնասակար օրգանիզմների բացահայտման համար.

ա) Արաբիս մոզաիկ վիրուս (Arabis mosaic virus)

բ) Ազնվամորու վրա օղավոր բծավորություն հարուցող պաթոգեն վիրուս (Raspberry ringspot virus)

գ) Ելակի վրա գալար առաջացնող պաթոգեն վիրուս (Strawberry crinkle virus)

դ) Ելակի վրա թաքնված «Ց» պաթոգեն վիրուս (Strawberry latent "C" virus)

ե) Ելակի վրա թաքնված օղավոր բծավորություն հարուցող պաթոգեն վիրուս (Strawberry latent ringspot virus)

զ) Ելակի վրա դեղին ծայր առաջացնող պաթոգեն վիրուս (Strawberry mild yellow edge virus)

է) Ելակի վրա երակային պաթոգեն վիրուս (Strawberry vein banding virus)

ը) Ելակի վրա կախարդական ցախավելի ձեռով միկոպլազմ (Strawberry witches' broom mycoplasma)

թ) Պոմիդորի սեւ օղակաձեւ հետքերով վիրուս (Tomato black ring virus)

ժ) Պոմիդորի օղակաձեւ հետքերով վիրուս

ժա) Կոլետտոտրիկում ակուտատում Սիմմոնդս (Colletotrichum acutatum Simmonds)

ժբ) Ֆիտոֆտորա ֆրագարիաէ Հիկման վար. ֆրագարիաէ Վիլկոքս եւ Դունկան (Phytophthora fragariae Hickman var. fragariae Wilcox & Duncan)

ժգ) Քսանտոմոնաս ֆրագարիաէ Քենեդի եւ Քինգ: (Xanthomonas fragariae Kennedy & King).

3.2. Մալուս Միլլի դեպքում՝

i) եթե բուսանյութը ծագում է այն երկրից, որը ճանաչված չէ որպես հետեւյալ վնասակար օրգանիզմներից որեւէ մեկից զերծ երկիր.

ա) Խնձորենու պրոլիֆերացիա (Apple proliferation mycoplasma) կամ

բ) Բալի տերեւների վիրուսը (ամերիկյան),

փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդներ եւ, ըստ անհրաժեշտության, համապատասխան վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսերը, եւ

ii) անկախ բուսանյութի ծագում ունեցող երկրից, փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդներ եւ, ըստ անհրաժեշտության, առնվազն հետեւյալ վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսերը.

ա) Ծխախոտի օղակաձեւ հետքերով վիրուս

բ) Պոմիդորի օղակաձեւ հետքերով վիրուս

գ) Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքը (*Erwinia amylovora* (Burr.) Winsl. et al)

3.3. Պրունուս L.-ի (*Prunus L.*) դեպքում՝ Պրունուսի յուրաքանչյուր տեսակի համար, ըստ անհրաժեշտության՝

i) եթե բուսանյութը ծագում է այն երկրից, որը ճանաչված չէ որպես հետեւյալ վնասակար օրգանիզմներից որեւէ մեկից զերծ երկիր.

ա) Ծիրանի վրա քլորոտիկ տերեւի միկոպլազմ. (Apricot chlorotic leafroll mycoplasma)

բ) Բալի տերեւների վիրուսը (ամերիկյան), կամ

գ) Պսեվդոմոնաս սիրինգաէ պվ. պերսիկաէ (Prunier et al.) Young et al.,

փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդներ եւ, ըստ անհրաժեշտության, համապատասխան վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսեր, եւ

ii) անկախ բուսանյութի ծագման երկրից, փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդներ եւ, ըստ անհրաժեշտության, առնվազն հետեւյալ վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսերը.

ա) Փոքր բալի վրա տարածվող պաթոգեն վիրուս (ոչ եվրոպական իզոլատներ) (Little cherry pathogen (non-European isolates))

բ) Դեղձի մոզաիկ վիրուսը (ամերիկյան)

գ) Դեղձի փքուն դիկետոսիա (Peace phony ricksettsia)

դ) Դեղձի տերեւաբույլի մոզաիկ վիրուսը

ե) Դեղձի տերեւաբույլի միկոպլազմը

զ) Դեղձի X-հիվանդության միկոպլազմը

է) Դեղձի դեղին միկոպլազմը

ը) Սալորի գծային ձեւի վիրուսը (ամերիկյան)

թ) Սալորի վիրուսը (Plum pox virus)

ժ) Պոմիդորի օղակաձեւ հետքերով վիրուս

(ժա) Քսանթոմոնաս կամպեստրիս pv. պրունի (Սմիթ) ներկ: (*Xanthomonas campestris* pv. *pruni* (Smith) Dye)

3.4. Յիդոնիա Միլլ.-ի (*Cydonia* Mill) եւ Պիրուս Լ.-ի (*Pyrus* L.) դեպքում, անկախ բուսանյութի ծագման երկրից, փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդները եւ, ըստ անհրաժեշտության, առնվազն հետեւյալ վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսերը.

Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքը (*Erwinia amylovora* (Burr.) Winsl. et al)

բ) Տանձենու տերեւների ոլորվածություն

4. Երկրորդ կետում նշված արտաքին ստուգումների ենթարկված բուսանյութը, եւ որի վրա դիտարկվել են վնասակար օրգանիզմների նշանները եւ նախանշանները, ենթարկվում է հետազոտության, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, փորձաստուգման՝ սահմանելու որքան հնարավոր է, նշանները եւ նախանշաններն առաջացնող վնասակար օրգանիզմների ինքնությունը:

Բաժին III Վիտիս Լ.-ի բույսեր՝ բացի մրգերից

1. Բուսանյութը, ըստ անհրաժեշտության, ենթարկվում է համապատասխան թերապիայի ընթացակարգերի, ինչպես սահմանված են ՊԳԿ/ԲԳՌՄԻ (FAO/IPGRI) Տեխնիկական ուղեցույցներում:

2. Առաջին կետի համաձայն կատարված թերապիայի ընթացակարգերից հետո բուսանյութն ամբողջությամբ ենթարկվում է ինդեքսավորման ընթացակարգերի: Բոլոր բուսանյութերը՝ ներառյալ ինդեքսավորվող բույսերը, պահվում են 1 հավելվածում սահմանված կարանտին տեղափակման պայմաններով

հաստատված տարածքներում: Պաշտոնական բացթողումը հաստատելու համար նախատեսված բուսանյութը պահվում է բուսականության աճի նորմալ ցիկլի պայմաններում եւ ենթարկվում է վնասակար օրգանիզմների՝ ներառյալ Դակտոսփայրա վիտիֆոլիաէ (Ֆիչ) (*Daktulosphaira vitifoliae* (Fitch)) եւ բոլոր այլ՝ 2000/29/ԵՀ հրահանգում նշված համապատասխան վնասակար օրգանիզմների նշանների եւ նախանշանների արտաքին ստուգման, հասնելուն պես եւ հետո, ըստ անհրաժեշտության, ինդեքսավորման ընթացակարգերի ժամանակահատվածում:

3. Երկրորդ կետի նպատակներով բուսանյութը ինդեքսավորվում է (փորձաստուգվում եւ բացահայտվում) վնասակար օրգանիզմների համար՝ համաձայն հետեւյալ ընթացակարգերի.

3.1. Եթե բուսանյութը ծագմամբ այն երկրից է, որը ճանաչված չէ որպես հետեւյալ վնասակար օրգանիզմներից զերծ երկիր.

i) Աջինաշիկա հիվանդություն (*Ajinashika disease*)

Փորձաստուգման ընթացքում օգտագործվում է համապատասխան լաբորատոր մեթոդը: Բացասական արդյունք ստանալու դեպքում բուսանյութը ինդեքսավորվում է Կոշուի խաղողի վազում եւ դիտարկվում բուսականության առնվազն երկու ցիկլի ընթացքում:

ii) Խաղողի վազի վրա տարածվող վիրուս (*Grapevine stunt virus*)

Փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան ցուցանիշային բույսերը՝ ներառյալ Կեմպբել Ըրլիի (*Campbell Early*) խաղողի վազը, իսկ դիտարկումը տեղի է ունենում մեկ տարվա ընթացքում:

iii) Ամռանը խաղողի վրա պիսակ (*Summer mottle*)

Փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան ցուցանիշային բույսերը՝ ներառյալ Սիդերիտիս (*Sideritis*), Կաբերնետ-Ֆրանկ (*Cabernet-Franc*) եւ **Mission** խաղողի վազերը:

3.2. Անկախ բուսանյութի ծագման երկրից՝ փորձաստուգման ընթացքում օգտագործվում են համապատասխան լաբորատոր մեթոդները եւ, ըստ անհրաժեշտության, հետեւյալ վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար ցուցանիշային բույսերը.

- ա) Հաղարջի տերեւների բժավոր վիրուս (Blueberry leaf mottle nepovirus)
- բ) Խաղողի վազի ոսկեփայլ դեղնում MLO եւ այլ՝ ֆիտոպլազմաների հետ ասոցիացված հիվանդություններ
- գ) Դեղձի տերեւաբույլի մոզաիկ վիրուսը (Peach rosette mosaic nepovirus)
- դ) Ծխախոտի օղակաձեւ հետքերով վիրուս (Tobacco ringspot virus)
- ե) Պոմիդորի օղակաձեւ հետքերով վիրուս (<<yellow vein>> շտամ կամ այլ շտամեր)
- զ) *Xylella fastidiosa* (Well & Raju)
- է) Խաղողի բակտերիալ նեկրոզ-*Xylophilus ampelinus* (panagopoulos) Willems et al.

4. Երկրորդ կետում նշված արտաքին զննման ենթարկված բուսանյութը, որի վրա դիտարկվել են վնասակար օրգանիզմների նշաններ եւ նախանշաններ, ենթարկվում է հետազոտության, այդ թվում՝ փորձաստուգման, եթե անհրաժեշտ է՝ որոշելու, որքան հնարավոր է, նշաններ եւ նախանշաններ առաջացնող վնասակար օրգանիզմների ինքնությունը:

Բաժին IV. Սոլանում L.-ի (*Solanum L.*) ստորգետնյա շիվերի կամ պալար կազմող տեսակների՝ տնկման համար նախատեսված բույսերը կամ դրանց հիբրիդները

1. Բուսանյութը, ըստ անհրաժեշտության, ենթարկվում է թերապիայի ընթացակարգերի, ինչպես սահմանվում են ՊԳԿ/ԲԳՈՄԻ (FAO/IPGRI) Տեխնիկական ուղեցույցներում:

2. Առաջին կետի համաձայն կատարված թերապիայի ընթացակարգերից հետո բուսանյութի յուրաքանչյուր միավոր ենթարկվում է ցանկավորման ընթացակարգերի: Բոլոր բուսանյութերը՝ ներառյալ ինդեքսավորվող բույսերը, պահվում են I հավելվածում սահմանված՝ կարանտին տեղափակման պայմաններով հաստատված տարածքներում: Պաշտոնական բացթողման հաստատման համար նախատեսված բուսանյութը պահվում է բուսականության աճի նորմալ ցիկլի համար պայմաններում եւ ենթարկվում է վնասակար օրգանիզմների՝ ներառյալ 2000/29/ԵՀ հրահանգում նշված բոլոր համապատասխան վնասակար օրգանիզմների եւ գետնախնձորի հիվանդության նշանների ու նախանշանների արտաքին ստուգման, հասնելուն պես եւ դրանից

հետո, մինչև ծերացումը, ինդեքսավորման ընթացակարգերի ժամանակահատվածում:

3. Երկրորդ կետում նշված ցանկավորման ընթացակարգերը համապատասխանում են հինգերորդ կետում սահմանված տեխնիկական դրույթներին՝ առնվազն հետեյալ վնասակար օրգանիզմները հայտնաբերելու համար.

-Մանրէներ

ա) Կարտոֆիլի օղակաձեւ փտում-*Clavibacter michiganensis* (Smith) Davis et al. ssp. *sepedonicus* (Spieckermann et Kotthoff) Davis et al.;

բ) *Ralstonia solanacearum* (Smith) Yabuuchi et al.

-Վիրուսներ եւ վիրուսանման օրգանիզմներ

ա) Անդերյան կարտոֆիլի թաքնված վիրուս (*Andean potato latent virus*),

բ) Կարտոֆիլի սեւ օղակաձեւ հետքերով վիրուս (*Potato black ringspot virus*),

գ) Կարտոֆիլի պալարների իլիկաձեւ վիրոիդ (*Potato spindle tuber viroid*),

դ) Կարտոֆիլի ալֆամովիրուս (*Potato yellowing alfamovirus*),

ե) Կարտոֆիլի վիրուս T (*Potato virus T*),

զ) Անդերյան կարտոֆիլի բծավոր վիրուս (*Andean potato mottle virus*),

է) Կարտոֆիլի ընդհանուր վիրուսներ A, M, S, V, X եւ Y (ներառյալ Yo, Yn եւ Yc), եւ կարտոֆիլի տերեւի վիրուս (*potato leaf roll virus*):

Սակայն, եթե կա կարտոֆիլի՝ պահանջներին համապատասխան սերմ, ապա ինդեքսավորման ընթացակարգը կատարվում է, որպեսզի բացահայտվեն վերելում առնվազն (ա)-(ե) կետերում նշված վիրուսները եւ վիրուսի նման օրգանիզմները:

4. Երկրորդ կետում նշված՝ արտաքին զննման ենթարկված բուսանյութը, եւ որի վրա դիտարկվել են վնասակար օրգանիզմների նշաններ եւ նախանշաններ, ենթարկվում է հետազոտության, այդ թվում՝ փորձաստուգման, եթե անհրաժեշտ է՝ որոշելու, որքան հնարավոր է, նշաններ եւ նախանշաններ առաջացնող վնասակար օրգանիզմների ինքնությունը:

5. Երրորդ կետում նշված տեխնիկական դրույթները հետեւյալն են.

-Մանրէներ

1. Պալարների համար ստուգել յուրաքանչյուր պալարի ծայրահատվածը: Նմուշի ստանդարտ չափն է 200 պալար: Սակայն, ընթացակարգը կարող է կիրառվել 200 պալարից քիչ պալար ունեցող նմուշների համար:

2. Երիտասարդ բույսերի եւ շիվերի, այդ թվում՝ միկրոբույսերի համար, ստուգել ցողունի ավելի ցածր մասերը եւ, ըստ անհրաժեշտության, արմատները՝ բուսանյութի յուրաքանչյուր միավորի համար:

3. Պալարների կամ ոչ պալարային ցողունների հիմքերի փորձաստուգման համար առաջարկվում է առաջին եւ երկրորդ կետերում նշված փորձաստուգումից հետո բուսականության աճի մեկ նորմալ ցիկլ:

4. Առաջին կետում նշված նյութի համար Կլավիբակտեր միկիգանենսիս (Սմիթ) Դեյվիս էտ ալ. սսպ. սեպեդոնիկոս (Սպիէկերման էտ Կոտտհոֆֆ) Դեյվիս էտ ալ.-ն է (*Clavibacter michiganensis* (Smith) Davis et al. ssp. *sepedonicus* (Spieckermann et Kotthoff) Davis et al.) Խորհրդի 39/85/ԵՏ⁵ հրահանգի I հավելվածում սահմանված Համայնքի մեթոդը: Երկրորդ կետում նշված նյութի համար կարող է կիրառվել փորձաստուգման այս մեթոդը:

5. Առաջին կետում նշված նյութի համար Ռալստոնիա սոլանացեարում (Սմիթ) Յաբուչի էտ ալ.-ն է (*Ralstonia solanacearum* (Smith) Yabuuchi et al.)- Խորհրդի 98/57/ԵՀ [1] հրահանգի II հավելվածում սահմանված Համայնքի մեթոդը: Երկրորդ կետում նշված նյութի համար կարող է կիրառվել փորձաստուգման այս մեթոդը:

-Վիրուսներ եւ վիրուսի նման օրգանիզմներ՝ բացառությամբ գետնախնձորի կափույր պալարի

1. Վեգետատիվ նյութի համար նվազագույն փորձաստուգումը (պալարներ, երիտասարդ բույսեր եւ շիվեր՝ ներառյալ միկրոբույսերը) ներառում է կարտոֆիլի կափույր պալարից բացի՝ հստակեցված ցանկում յուրաքանչյուր վնասակար օրգանիզմի ծաղկման շրջանում կատարված սերոլոգիական փորձաստուգում,

⁵ ՊՏ L 259, 18.10.1993թ., էջ 1: Հանձնաժողովի 2006/56/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 182, 04.07.2006թ., էջ 1):

որին հաջորդում է սերոլոգիական փորձաստուգումից հետո բացասական արդյունքով նյութի կենսաբանական փորձաստուգումը: Կարտոֆիլի տերեւի վիրուսի համար կատարվում են երկու սերոլոգիական փորձաստուգումներ:

2. Պահանջներին համապատասխան սերմի համար նվազագույն փորձաստուգումը սերոլոգիական փորձաստուգումը կամ կենսաբանական փորձաստուգումն է, եթե սերոլոգիական փորձաստուգումը մատչելի չէ: Այլ մեթոդով, բացասական ստուգանմուշների մեկ մասի վերստուգումը եւ սահմանային արդյունքների փորձաստուգումը շատ ցանկալի են:

3. Առաջին եւ երկրորդ կետերում նշված սերոլոգիական ու կենսաբանական փորձաստուգումները կատարվում են ջերմոցում աճող եւ յուրաքանչյուր ցողունի վրա առնվազն երկու դիրքերից որպես նմուշ վերցված բույսերի վրա՝ ներառյալ յուրաքանչյուր ցողունի վերեւի մասում փոքր, ամբողջությամբ բացված տերեւը եւ միջին դիրքում ավելի մեծ տերեւը. հնարավոր ոչ համակարգային վարակի պատճառով յուրաքանչյուր ցողուն փորձաստուգում է անցնում: Սերոլոգիական փորձաստուգման դեպքում առանձին բույսերի փոքր տերեւների մանրակշռում չի կատարվում, եթե մանրակշռման չափը վավերացված է օգտագործման մեթոդի համար. յուրաքանչյուր ցողունից փոքր տերեւները կարող են մանրակշռվել՝ յուրաքանչյուր բույսից նմուշ կազմելու համար: Կենսաբանական փորձաստուգման դեպքում առավելագույն մանրակշռումը կատարվում է 5 բույսերի առումով՝ ցուցանիշային բույսերի կրկնօրինակների նվազագույնի ներարկմամբ:

4. Առաջին եւ երկրորդ կետերում նշված կենսաբանական փորձաստուգման համար օգտագործվող համապատասխան ցուցանիշային բույսերն այն բույսերն են, որոնք թվարկված են Բուսերի պաշտպանության եվրոպական եւ միջերկրական կազմակերպության կողմից, կամ այլ՝ պաշտոնապես հաստատված ցուցանիշային բույսերը, որոնցով հայտնաբերվում են վիրուսները:

5. Կարանտինից բաց է թողնվում միայն ուղղակիորեն փորձաստուգված նյութը: Եթե **կատարվել է կարտոֆիլի աչքերով ինդեքսավորում**, ապա կարող է հրապարակվել միայն ստուգված աչքից ստացվածը: Պալարը չպետք է ազատվի՝ **ոչ համակարգային վարակի** հետ կապված հնարավոր խնդիրների պատճառով:

Կարտոֆիլի պալարների իլիկաձեւ վիրոսի դը

1. Բոլոր նյութերի դեպքում ստուգվում են ջերմոցում աճող բույսերը, երբ հասնում են, բայց նախքան ծաղկումը եւ ծաղկափոշի արտադրելը: Պալարի ծիլերի/լաբորատոր բույսերի/ փոքր սածիլների փորձաստուգումը համարվում է միայն որպես նախնական փորձաստուգում:

2. Նմուշները վերցվում են բույսի յուրաքանչյուր ցողունի վերելում գտնվող լիովին ընդլայնված տերեւիկից:

3. Փորձաստուգման համար բոլոր նյութերն աճեցվում են 18 °C ջերմաստիճանից ոչ պակաս ջերմաստիճանում (նախընտրելի է 20 °C ջերմաստիճանից բարձր) եւ առնվազն 16-ժամյա լուսային օրվա տեւողությամբ:

4. Փորձաստուգումը կատարվում է cDNA կամ RNA, return-PAGE (արձաթե ներկվածքով) կամ RT-PCR պիտակավորմամբ ռադիոակտիվ կամ ոչ ռադիոակտիվ զննածոդերով:

5. Զննածոդերի եւ return-PAGE-ի մեծացման առավելագույն չափը 5-ն է: Այս չափի կամ ավելի մեծ չափերի մեծացումը պետք է վավերացվի:

ՄԱՍ Բ

2000/29/ԵՀ հրահանգի II եւ IV հավելվածներում նշված բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների համար՝

1. Կարանտինի համար պաշտոնական միջոցառումները ներառում են 2000/29/ԵՀ հրահանգի I եւ II հավելվածներում նշված համապատասխան վնասակար օրգանիզմների անհրաժեշտ ստուգումը կամ փորձաստուգումը եւ, ըստ անհրաժեշտության, իրականացվում են հատուկ վնասակար օրգանիզմների համար 2000/29/ԵՀ հրահանգի IV հավելվածում սահմանված հատուկ պահանջներով: Հաշվի առնելով նման հատուկ պահանջները՝ կարանտինի միջոցառումների համար օգտագործվող մեթոդները պետք է լինեն նրանք, որոնք սահմանված են 2000/29/ԵՀ հրահանգի IV հավելվածում կամ այլ՝ պաշտոնապես հաստատված համարժեք մեթոդներ:

2. Բույսերը, բուսական ծագում ունեցող ապրանքները եւ այլ առարկաներ պետք է, ըստ առաջին կետի դրույթների, զերծ լինեն այդ բույսերի, բուսական ծագում ունեցող ապրանքների եւ այլ առարկաների համար 2000/29/ԵՀ հրահանգի I, II եւ IV հավելվածներում նշված համապատասխան վնասակար օրգանիզմներից:

ՊՏ L 235, 21.08.1998թ., էջ 1: Հանձնաժողովի 2006/63/ԵՀ հրահանգով
փոփոխված հրահանգ (ՊՏ L 206, 27.07.2006թ., էջ 36):

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած Հրահանգը՝ իր փոփոխություններով հանդերձ

(5-րդ հոդվածում նշված)

Հանձնաժողովի 95/44/ԵՀ հրահանգ (ՊՏ L 184, 03.08.1995թ., էջ 34)

Հանձնաժողովի 97/46/ԵՀ հրահանգ | ՊՏ L 204, 31.07.1997թ., էջ 43|

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(5-րդ հոդվածում նշված)

Հրահանգ | փոխատեղման ժամկետը |

95/44/ԵՀ | 1996 թվականի փետրվարի 1 |

97/46/ԵՀ | 1998 թվականի հունվարի 1 |

ՀԱՎԵԼՎԱԾ V

Համեմատական աղյուսակ

95/44/ԵՀ հրահանգ |Սույն հրահանգը|

Հոդված 1(1) | Հոդված 1(1) |

Հոդված 1(2), ներածական մաս | Հոդված 1(2), ներածական մաս |

Հոդված 1(2), առաջին պարբերությո՞թ | Հոդված 1(2)(ա) |

Հոդված 1(2), երկրորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(բ) |

Հոդված 1(2), երրորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(գ) |

Հոդված 1(2), չորրորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(դ)

Հոդված 1(2), հինգերորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(ե)

Հոդված 1(2), վեցերորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(զ)

Հոդված 1(2), յոթերորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(է) |

Հոդված 1(2), ութերորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(ը) |

Հոդված1 (2), իններորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(թ) |

Հոդված1 (2), տասներորդ պարբերությո՞թ | Հոդված 1(2)(ժ) |

Հոդված 2 եւ 3 | Հոդված 2 եւ 3 |

Հոդված 4(1) | — |

Հոդված 4(2) | Հոդված 4 |

— | Հոդված 5 |

Հոդված 5 | Հոդված 6 |

Հոդված 6 | Հոդված 7 |

Հավելվածներ I, II եւ III | Հավելվածներ I, II եւ III |

— | Հավելված IV |

— | Հավելված V |